Հրահանգներ առցանց քվեարկության համար

Инструкция по онлайн-голосованию

Instructions for online voting

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ,ԿՈՆԴ ԹԱՂԱՄԱՍԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

ОТКРЫТЫЙ МЕЖДУНАРОДНЫЙ КОНКУРС НА ГРАДОСТРОИТЕЛЬНУЮ РЕГЕНЕРАЦИЮ КВАРТАЛА “КОНД”

OPEN INTERNATIONAL COMPETITION FOR REHABILITATION-REGENERATION CONCEPT OF “KOND” DISTRICT

Երևան 2021



Հրահանգներ առցանց քվեարկության համար

Инструкция по онлайн-голосованию

Instructions for online voting

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ «ԿՈՆԴ» ԹԱՂԱՄԱՍԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

ОТКРЫТЫЙ МЕЖДУНАРОДНЫЙ КОНКУРС НА ГРАДОСТРОИТЕЛЬНУЮ РЕГЕНЕРАЦИЮ КВАРТАЛА “КОНД”

OPEN INTERNATIONAL COMPETITION FOR REHABILITATION-REGENERATION CONCEPT OF “KOND” DISTRICT

Երևան 2021

Ժյուրիի քվեարկության արձանագրություն

1-ին փուլ

Ամսաթիվ ՝ 21 հունիսի 2021 թվական
Ձևաչափ՝ առցանց քվեարկություն:

2-րդ փուլ

Ամսաթիվ ՝ 22 հոկտեմբերի 2021 թվական
Ձևաչափ՝ առցանց քվեարկություն:

Կազմակերպիչ

«Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե»

Ժյուրիի իրավասություններին են դասվում

- Մասնակիցների ներկայացրած Հայեցակարգի գնահատումն ու համեմատումը, Մրցույթի հաջորդ՝ եզրափակիչ փուլ անցնող հաղթողների ընտրությունը
- Եզրափակիչ փուլ անցած մասնակիցների կողմից պատրաստված քաղաքաշինական վերակազմավորման հայեցակարգային/էսքիզային նախագծի նյութերի համեմատում, գնահատում, Մրցույթի հաղթողների որոշում:
- Մասնակիցների և եզրափակիչ փուլ անցած մասնակիցների որակազրկում:

Մրցութային փաստաթղթեր

Մրցութային փաստաթղթերը ներառում են հետևյալ փաստաթղթերը, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է դրանց անբաժանելի մասը.

- Մրցույթի պայմանները,
- Տեխնիկական առաջադրանքը,
- Ելակետային նյութերի ցանկը:

Պարզաբանումների տրամադրում

Ցանկացած մասնակից իրավունք ունի ուղարկել հարցում Մրցութային փաստաթղթերի դրույթների պարզաբանման վերաբերյալ: Այդպիսի հարցումն ուղարկվում է գրավոր նամակի տեսքով Մրցույթի կայքում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

Կազմակերպիչը պարտավոր է տրամադրել Մրցույթի դրույթների պարզաբանման վերաբերյալ հարցմանը պատասխան էլեկտրոնային փաստաթղթի տեսքով հարցումը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Մասնակիցների հարցումները պետք է ստացվեն ոչ ուշ քան Հայտերի ընդունման վերջնաժամկետից 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

1. Քվեարկության նպատակը

Մրցույթի 1-ին փուլի վերաբերյալ ժյուրիի հանդիպման նպատակն է ընտրել 7 եզրափակիչ փուլ անցած մասնակիցներին՝ մասնակցության իրավունք ստացած մասնակիցների ներկայացրած հայեցակարգերի գնահատման և համեմատություն հիման վրա:

2. Մասնակցություն քվեարկությանը և քվորում

Մրցույթի կանոնների համաձայն, ժյուրիի նիստն ունի քվորում, եթե ժյուրիի անդամների առնվազն կեսը ներկա է: Մրցույթի 1-ին փուլի շրջանակներում - ժյուրիի 33 անդամներից քվեարկել է 50 տոկոս + 1 ձայն: Ժյուրին իրավասու է որոշումներ կայացնելու համար մրցույթի եզրափակիչ փուլ անցած մասնակիցների ընտրության վերաբերյալ:

3. Քվեարկության կարգը

Ժյուրին քվեարկությունն անցկացնում է հեռակա առցանց- հավելվածում, ժյուրիի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ընտրել առավելագույնը 20 լավագույն հայեցակարգեր: Գրառումների վարումը և ձայների հաշվառումն իրականացնում է Կազմակերպիչը: եթե նախապես որոշված ժամկետին երբ նախատեսված էր կազմակերպել Ժյուրիի նիստը չի ապահովում քվորում կամ նիստին չի ընդունվել պահանջվող որոշումը, ապա նիստը կարող է հետաձգվել (ներկա անդամների կամ նաև բացակայողների հեռակա որոշմամբ) մինչև հաջորդ օրը: Ժյուրիի նիստը իրավաչափ է (ունի քվորում) եթե դրան մասնակցում է Ժյուրիի անդամնեցիր կեսից ավելին: Ժյուրիի նիստերի ընթացքը, հնչեցված կարծքները, ընդունված որոշումները և քվեարկության արդյունքները արտացոլվում են Ժյուրիի նիստի արձանագրությունում: Քվեարկությունը կատարվում է փակ և իրականացվում գնահատման թերթիկների լրացման ձևով: Ժյուրիի կողմից Մասնակիցներին տրված գնահատականների գումարման արդյունքում ձևավորվում է մրցութային առաջարկների ռեյտինգ:

Քվեարկություն կարող է անցկացվել նաև մասնակիցների կողմից մյուսների աշխատանքները գնահատելու միջոցով՝ անանուն: Արդյունքները կհամադրվեն:

4. Եզրափակիչ փուլ անցած մասնակիցների ընտրության կարգը

Մրցույթի կանոններին համապատասխան, եզրափակչի մասնակիցների ընտրությունն իրականացվում է ռեյտինգային քվեարկության հիման վրա, որն իրականացվում է մեկ կամ մի քանի անգամ փուլերով: Եզրափակիչներ հայտարարվում են մրցութային առաջարկները, որոնք ստացել են ժյուրիի անդամների ավելի շատ ձայներ մրցույթի 1-ին փուլի քվեարկություն անցկացված փուլերում: Ավելին, ժյուրիի յուրաքանչյուր անդամ իրավունք ուներ ընտրել եզրափակչի առավելագույնը 20 մասնակից: Եթե Ժյուրիի կողմից ընտրվում է 7 մասնակից միաձայն, երկրորդ փուլի անհրաժեշտություն չի առաջանում:

Եզրափակիչ փուլ անցած մասնակցի որակազրկումն իրականացվում է քանակական քվեարկությամբ Ժյուրիի մեկ անդամ-մեկ ձայն պարզ սկզբունքով, ժյուրիի նիստին ներկա անդամների պարզ մեծամասնության քվեարկությամբ: Քվեարկությունը բաց է և իրականացվում է ձեռքի բարձրացման միջոցով:

Մրցութային առաջարկների ներկայացման կարգն ու ժամկետները

1-ին փուլի համար մասնակիցները պետք է Կազմակերպչին ներկայացնեն Մրցութային առաջարկների փաթեթները ոչ ուշ քան 10 հունիսի 2021թ. Երևանի ժամանակով ժամը 18.00:

2-րդ փուլի համար մասնակիցները պետք է Կազմակերպչին ներկայացնեն Մրցութային առաջարկների փաթեթները ոչ ուշ քան 11 հոկտեմբերի 2021թ Երևանի ժամանակով ժամը 18.00:

Մինչ Մրցութային փաթեթների ներկայցման ավարտը ցանկացած ժամանակ Մասնակիցը կարող է մտցնել փոփոխություններ Մրցութային առաջարկներում փոփոխություններ ՝ նախապես տեղեկացնելով Կազմակերպչին:

Յուրաքանչյուր մասնակից տալիս է մրցույթի Կազմակերպչին Մրցութային առաջարկում ներառված Ստեղծագործությունների նկատմամբ հետևյալ իրավունքները.

- Վերատադրելու
- Հանրային ցուցադրության
- Եթեր հաղորդագրությամբ
- Թարգմանության
- Հանրության հասանելիության:

Եզրափակիչ անցած մասնակիցը կարող է մերժվել շարունակել մասնակցությունը Մրցույթին հետևյալ դեպքերում.

- Մրցութային առաջարկը չի համապատասխանում Մրցութային փաստաթղթերի պահաջներին և առաջադրանքին
- Մրցութային առաջարկը ներկայացված է սահմանված ժամկետների խախտումներով
- Ժյուրին կայացրել է որակազրման որոշում:

Մրցույթի հաղթողի ընտրություն

Ժյուրին քննարկում է եզրափակիչ մասնակիցների ներկայացվրած Մրցութային առաջարկները և հաշվի առնելով մրցույթի պահանջներում ներկայացված Մրցութային գերակայությունները՝ Մրցութային առաջարկներին շնորհում է ռեյտնգային համարներ (բալեր):

Հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկին Ժյուրիի նիստի արդյունքում շնորհվել է առաջին համարը:

Մրցութային առաջարկների գնահատման չափորոշիչներ

1. Մրցութային առաջարկների համապատասխանություն առաջադրանքի պահանջներին:
2. Մրցութային առաջարկների համապատասխանություն ՀՀ օրենսդրական դաշտին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:
3. Մրցութային առաջարկների քաղաքաշինական ենթատեքստի համապատասխանությունը պատմական ժառանգության պահապանության խնդիրներին:
4. Հայեցակարգային, ճարտարապետաքաղաքաշինական, ֆունկցիոնալ հատակագծային, լանդշաֆտային կազմակերպման լուծումների որակը և գաղափարի ստեղծագործական ներուժը:
5. Առաջարկվող լուծումների իրագործելիությունը՝ առկա տեխնոլոգիաների տեսանկյունից և դրանց կիրառման հնարավորությունները:
6. Մրցութային առաջարկների նպատակահարմարությունը և տնտեսականարդյունավետությունը:
7. Ժյուրիի հայեցողությամբ այլ գործոններ:



Մրցույթի արդյունքների հիման վրա հաղթողները կընտրվեն երեք անվանակարգերում, որոնք համապատասխանում են մրցույթի երեք պահանջներին՝ ռեգեներացիա, իրագործելիություն, հնի-նորի շարունակականություն:

Մասնակցի հայտը պետք է պարունակի նյութեր բոլոր անվանակարգերի համար, միայն մեկ կամ երկու անվանակարգեր ներառող դիմումը ներկայացնել չի թույլատրվում:

По результатам конкурса, победители будут выбраны в трех номинациях соответствующие решениям для трех требованиям конкурса: возрождение, осуществимость, преемственность старого-нового.
В заявке участника должны быть материалы по всем номинациям; подача заявки в только одна или две номинации не допускаются.

Based on the results of the competition, winners will be selected in three nominations

meet the three requirements of the competition: regeneration, feasibility, continuity of the old-new.

A participant's application must contain materials for all nominations; submitting an application in only one or two nominations is not permitted.

Երևան 2021